# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝** ԳԲՔԱ-ԷՍ-2019/42, 26.03.2019թ.

**Բողոք բերող անձ՝** «Սլացք» ՓԲԸ

**Պատվիրատու՝** ՀՀ պաշտպանության նախարարություն

**Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/9 ծածկագրով գնանշման հարցում / լոգանք ընդունելուն օժանդակող շարժական սարքերի ձեռքբերում.

**Բողոքի պահանջը՝**

Պարտավորեցնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/9 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել 21.03.2019թ. թիվ 1 որոշմամբ հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը, թիվ 4-րդ արձանագրությամբ՝ «Երվադա» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու, ներկայացված տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսված բնութագրերին համապատասխան գնահատելու և թիվ 3-րդ արձանագրությամբ վերջինիս առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի

50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

*Գնումների հետ կապված բողոքներ բերող անձին*

*հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս 54 բ շենք*

Բողոք բերող անձ՝ *<<Սլացք>> ՓԲԸ*

*հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, Թևոսյան 3*

*էլ.հասցե՝ slatsk@mail.ru*

*հեռ (+374)-093-116-000*

Պատվիրատու՝ *ՀՀ պաշտպանության նախարարություն*

*հասցե՝ ք. Երևան, Բագրևանդի 5*

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ *<<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/9>>*

*ծածկագրով գնանշման հարցում,*

*լոգանք ընդունելուն օժանդակող շարժական սարքեր*

*/Շարժական դաշտային բաղնիք/ ձեռքբերում*

## *ԲՈՂՈՔ*

1. *Բողոքի առարկան, փաստացի հիմքերը և ապացույցները.*

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շարջական դաշտային բաղնիքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է *<<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/9>>* ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր համաձայն.

*<<Շարժական դաշտային բաղնիք (հատ) ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչության կողմից հատկացված Զիլ-131, Կամազ կամ ՈՒրալ մակնիշի կոնց ավտոմեքենա, նախատեսված դաշտային բաղնիքի համար, որի թափքն իրենից ներկայացնում է դռնով և պատուհաններով սարքավորված արկղանման մետաղյա ծավալուն կառույց: Թափքի ներսում, դիմացի պատի մոտ տեղակայված են սառը ջրի բաքերը, բաքերը արտադրվում են 5-6 մմ հաստության պողպատից, որոնց կողքին գտնվում է օդամբարն իր ռեդուկտորով և երկշղթայանի մանոմետրով: Տաք ջրի բաքը արտադրվում են 3,0-3,5 մմ հաստության պողպատից՝ տեղակայվում է մուտքի պատի մոտ: Խողովակաշարով սառը և տաք ջրի բաքերը միացված են վառարանին և ցնցուղային սարքերին:*

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՍՏԻՑ N 5-13113
«26» 03 2019 թ.

*1 ժամում 300լ ջուրը մինչև 600 c տաքացնելու հզորությամբ վառարան, որը իր ծխատար խողովակի հետ միասին գտնվում է թափքից դուրս: Վառարանը արտադրվում է 5 մմ հաստության պողպատից: Վառարանը նախատեսված է չոր վառելիքով /փայտով/ շահագործելու համար:*

*Թափքի դրսից գտնվում է ջրառքի համար նախատեսված խողովակապտուկը, որը միացված է խողովակաշարին: Թափքը ներսի կողմից կահավորված է 3 անձի համար նախատեսված նստարաններով և առնվազն 6 կտոր հագուստի կախիչներով: 3 հատ լուսավորության համակարգ (LED) տեսակի, միացված ավտոմոբիլային էլեկտրական ցանցին:*

*Թափքի կողային պատը երկու երկայնական մասերից: Ներքևի հատվածն ամբողջ մակերեսով ունի խորացում և սարքավորված է ջրահեռացման հարմարանքներով, իսկ վերևի մասում տեղադրված են թվով 3 ցնցուղային սարքերը: Թափքի կողային պատի եզրերից ամրացված է անջրանցիկ շերտով պատված գործվածք, սարքի աշխատանքային վիճակում լողանալու հատվածը արտաքին միջավայրից մեկուսացնելու համար, որի վրա ներսի կողմից արված է դուռն դեր կատարող ծածկվող բացվածք:*

*Հատուկ մասի ուրվագիծ-բացատրագիրը ըստ Հավելվածի:*

*ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչության կողմից Զիլ-131, Կամազ կամ ՈՒրալ մակնիշի կունգ ավտոմոբիլները հատկացվում են գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներից մեկ ամիս առաջ: Կունգի արտաքին և ներքին մասի նորոգման, կահավորման աշխատանքներն իրականացվում են մրցույթը շահող կազմակերպության հաշվին:*

*Շահագործման երաշխիքային ժամկետը՝ 2 տարի>>:*

Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալությունը <<Սլացք>> ՓԲԸ-ին տվել է թիվ 539 Ս՝ *շարժական դաշտային բաղնիքի* օգտակար մոդելի արտոնագիրը:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել նաև <<Սլացք>> ՓԲԸ-ն և <<Երվադա>> ՍՊԸ-ն /այսուհետ նաև՝ Ընկերություն/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3-րդ արձանագրության համաձայն՝ գների հավասար լինելու հանգամանքով պայմանավորված մասնակիցները հրավիրվել են միաժամանակյա բանակցությունների:

2019թ. մարտի 15-ին տեղի ունեցած բանակցությունների համաձայն՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել <<Երվադա>> ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի թիվ 4-րդ արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին <<Երվադա>> ՍՊԸ-ի համապատասխանությունն հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Գնահատող հանձնաժողովը որոշել է որակավորման հատկանիշները գնահատել բավարար և վերջինիս ճանաչել ընտրված /հաղթող/ մասնակից՝ սահմանելով անգործության 10 օր ժամկետ:

www.gnumner.am կայքում առկա տվյալների ամապատասխան անգործությունը ավարտվում է 26.03.2019թ. ժամը 23:59-ին:

## 2. *Բողոքի իրավական հիմքերը.*

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով*. Բավարար են գնահատվում *հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը*, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ *բավարար գնահատված* հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

<<Գյուտերի, օգտակար մոդելի և արդյունաբերական նմուշի>> մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն.

*1. Գյուտի կամ օգտակար մոդելի արտոնագրով արտոնագրատիրոջը բացառիկ իրավունք է տրվում արտոնագրված օբյեկտն օգտագործելու իր հայեցողությամբ, եթե դա չի խախտում այլ արտոնագրատերերի իրավունքները, ինչպես նաև երրորդ անձանց արգիլելու՝*

*1) եթե արտոնագրի առարկան արտադրանք է՝ առանց իր թույլտվության պատրաստել, օգտագործել, շուկա մտցնել, առաջարկել վաճառքի, վաճառել կամ ներմուծել կամ նշված գործողություններից մեկի նպատակով ձեռք բերել (տիրապետել) այդ արտադրանքը.*

2) եթե արտոնագրի առարկան եղանակ է՝ առանց իր թույլտվության օգտագործել այդ եղանակը կամ առաջարկել այդպիսի օգտագործում, երբ երրորդ անձը գիտի թույլտվության անհրաժեշտության մասին կամ դրա հանգամանքներն ակնհայտ են, ինչպես նաև շուկա մտցնել, առաջարկել վաճառքի կամ վաճառել այդ եղանակով անմիջականորեն ստացված արտադրանքը, օգտագործել, ներմուծել կամ նշված գործողություններից մեկի նպատակով ձեռք բերել (տիրապետել) այդ արտադրանքը:

1.1. Գյուտի արդյունքում յուրահատուկ հատկանիշներ ձեռք բերած կենսաբանական նյութի արտոնագրից բխող պահպանությունը տարածվում է վերարտադրման կամ բազմացման եղանակով այդ կենսաբանական նյութից ստացված նույնական կամ դիվերգենտ (տարբերվող) ձև ունեցող միևնույն յուրահատուկ հատկանիշները ձեռք բերած ցանկացած կենսաբանական նյութի վրա:

1.2. Գյուտի արդյունքում յուրահատուկ հատկանիշներ ձեռք բերած կենսաբանական նյութի ստացման եղանակի արտոնագրից բխող պահպանությունը տարածվում է անմիջականորեն այդ եղանակով ստացված կենսաբանական նյութի վրա և վերարտադրման կամ բազմացման եղանակով անմիջականորեն այդ կենսաբանական նյութից ստացված նույնական կամ դիվերգենտ (տարբերվող) ձև ունեցող և միևնույն յուրահատուկ հատկանիշները ձեռք բերած ցանկացած այլ կենսաբանական նյութի վրա:

1.3. Գենետիկական տեղեկատվություն պարունակող կամ դրանից բաղկացած արտադրանքի արտոնագրից բխող պահպանությունը տարածվում է ցանկացած նյութի վրա, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետում նշվածի, որի մեջ այդ արտադրանքը ներառված է, և որը պարունակում է այդ գենետիկական տեղեկատվությունը և կատարում է դրա ֆունկցիան:

2. Արտադրանքի ստացման եղանակի արտոնագրի գործողությունը տարածվում է նաև անմիջականորեն այդ եղանակով ստացված արտադրանքի վրա: Ընդ որում, արտադրանքը համարվում է արտոնագրված եղանակով ստացված, եթե ապացուցված չէ, որ դա ստացվել է այլ եղանակով: Այս դեպքում ապացուցման պարտավորությունը դրվում է պատասխանողի վրա, եթե արտոնագրված եղանակով ստացված արտադրանքը նոր է:

2.1. Արտոնագիրը դրա տիրոջն իրավունք է տալիս նաև արգելելու երրորդ անձանց՝ առանց իր համաձայնության այլ անձի փոխանցել կամ ոչ իրավասու անձանց առաջարկել գյուտի համար կարևոր տարրերը գյուտն օգտագործելու նպատակով այն դեպքում, երբ երրորդ անձը գիտի կամ հանգամանքների բերումով ակնհայտ է դառնում, որ այդ տարրերը հնարավորություն են տալիս գյուտն օգտագործել և օգտագործվում են այդ նպատակով: Այս դրույթը չի կիրառվում, երբ նշված տարրերը շուկայում առկա սովորական արտադրանք են, բանի դեռ երրորդ կողմը շահագրգիռ անձին չի դրդել կատարելու սույն հոդվածի 1-ին մասով արգելված գործողությունները:

3. Արտոնագրից բխող իրավական պահպանության ծավալը որոշվում է հավակնության սահմանման այն ծավալով, որը մատչելի է դարձվել հանրությանը (հրապարակվել է), պայմանով, որ այն չի գերազանցում սկզբնական հայտում նշված հավակնությունները: Գյուտի, օգտակար մոդելի նկարագրությունը և գծագրերն օգտագործվում են հավակնության սահմանման մեկնաբանման համար:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 32-րդ կետի 1-ին ենթակետի <<զ>> պարբերության համաձայն՝ հրավերով սահմանվում է, որ մասնակիցը հայտով

ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կազի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ բննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

### *3. Բողոքի վերլուծությունը և պահանջը.*

Այսպիսով, ՀՀ ՊՆ <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/9>> ծածկագրով գնահատող հանձնաժողովը խախտել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով և <<Գյուտերի, օգտակար մոդելի և արդյունաբերական նմուշի>> մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված պահանջները, քանի որ առանց հաշվի առնելով վերոգրյալ հոդվածներով սահմանված իրավական հիմքերը հաղթող մասնակից է ճանաչել մի կազմակերպության, որը օրենքի ուժով իրավունք չունի իրականացնել նմանատիպ գործունեություն:

Այս դեպքում <<Երվադա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված որոկավորումը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատվել են բավարար, սակայն վերջինս չունի դաշտային շարժական բաղնիկ կառուցելու որևէ իրավասություն և/կամ իրավունք, քանի որ նման իրավունք տրված է բացառապես <<Սլացք>> ՓԲԸ-ին: <<Երվադա>> ՍՊԸ-ն նույնությամբ արտատպել է հրավերի տեխնիկական բնութագիրը և ներկայացրել է որպես սեփական, այնինչ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի <<զ>> պարբերության համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ընկերությունը հրավերով

սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/9>> ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրերը նույնն են, ինչ <<Սլացք>> ՓԲԸ-ին տրված արտոնագրում նախատեսված բնութագրերը, այս պարագայում <<Երվադա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի բնութագրերը չեն կարող համապատասխանել հրավերով սահմանված բնութագրերին, քանի որ միայն <<Սլացք>> ՓԲԸ-ին է տրված որպես օգտակար մոդել շարժական բաղնիքի պատրաստումը և որևէ կազմակերպություն առանց ընկերության թույլտվության իրավունք չունի պատրաստել, օգտագործել, շուկա մտցնել, առաջարկել վաճառքի, վաճառել կամ ներմուծել կամ նշված գործողություններից մեկի նպատակով ձեռք բերել (տիրապետել) այդ արտադրանքը:

Ելնելով վերոգրյալից՝ <<Սլացք>> ՓԲԸ գնումների հետ կապված բողոքներ բննող անձին

խնդրում է

Պարտավորեցնել <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/9>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել 2019 թվականի մարտի 21-ի թիվ 1 որոշմամբ հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը, թիվ 4-րդ արձանագրությամբ՝ <<Երվադա>> ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու, ներկայացված տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսված բնութագրերին համապատասխան գնահատելու և թիվ 3-րդ արձանագրությամբ վերջինիս առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու:

Կից ներկայացնում ենք բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի և <<Սլացք>> ՓԲԸ-ին տված թիվ 539 Ս՝ շարժական դաշտային բաղնիքի օգտակար մոդելի արտոնագրի պատճենները:

Առդիր՝ 11 թերթ:

*Հարգանքով՝*

*<<Սլացք>> ՍՊԸ-ի տնօրեն՝* *Ա. Ահարոնյան*